CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆ 2024

CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES.
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ.....3

1.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 4

1.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ 7

1.4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ 8

1.5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....10

ՀՀ Արդարադատության նախարարի 2021թ. հոկտեմբերի 8-ի N 494-Ն հրամանի N 9 հավելվածով սահմանված քաղաքացիական կացության պետական գրանցման ակտը վերականգնելու մասին դիմումի ձևաթուղթ.....12

*Եթե Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման արդյունքում կորցրել եք Ձեզ կամ Ձեր ազգականներին պատկանող քաղաքացիական կացության ակտեր **(օրինակ՝ ծննդյան, ամուսնության, ամուսնալուծության վկայական և այլն)**, ապա կարող եք դիմել **ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալություն**՝ քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելու համար:*

ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության

Հեռ.: + (374 10) 59 41 63

Տեղեկատու: + (374 10) 59 39 35

Հասցեների և կապի միջոցների հղում: https://www.moj.am/services/branches/p/2/

1.1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ գլուխը սահմանում է քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելու կարգը:

Օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելու հիմք է ոչնչացման կամ կորստի հետևանքով քաղաքացիական կացության ակտային գրանցման բացակայությունը** քաղաքացիական կացության ակտային գրանցումների արխիվում:

Օրինակ՝ ԼՂ բռնի տեղահանված անձը տեղահանման ճանապարհին կորցրել է իր ամուսնության վկայականը, որի ակտային գրանցումը բացակայում է քաղաքացիական կացության ակտային գրանցումների արխիվում:

Քաղաքացիական կացության ակտային գրանցումների արխիվում ստուգումը կատարվում է դիմումում նշված քաղաքացիական կացության ակտի գրանցման ենթադրյալ վայրի գրանցամատյաններով ոչ ավելի, քան երեք տարվա կտրվածքով՝ այն տարվա համար, որը նշված է դիմումում, դրան նախորդող և հաջորդող մեկ տարվա շրջանակում:

Քաղաքացիական կացության ակտային գրանցումները **վերականգնվում են այն դեպքում, երբ առկա են հաստատող փաստաթղթեր այն մասին, որ համապատասխան քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը նախկինում կատարվել է:**

1.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Օրենքի 71-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելու դիմում ներկայացնելու սուբյեկտների կազմը, դիմումին ներկայացվող պահանջները և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Այսպես.

Քաղաքացիական կացության ակտային գրանցման վերականգնման դիմում կարող են ներկայացնել.

(1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

(2) Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող օտարերկրյա քաղաքացիները,

(3) քաղաքացիություն չունեցող անձինք,

(4) անձինք, որոնց կորսված քաղաքացիական կացության ակտերը գրանցվել են Հայաստանի Հանրապետությունում:

Քաղաքացիական կացության ակտերի վերականգնումը կատարվում է՝

(1) այն անձի դիմումի հիման վրա, որի վերաբերյալ կազմվել էր կորսված քաղաքացիական կացության ակտը.

(2) տասնութ տարին չլրացած անձի վերաբերյալ ակտային գրանցումը վերականգնվում է նրա ծնողի, օրինական ներկայացուցչի, ինչպես նաև այն անձանց և կազմակերպությունների դիմումների հիման վրա, որոնց խնամակալությանն է հանձնված երեխան.

(3) շահագրգիռ անձի դիմումի հիման վրա, եթե կորսված քաղաքացիական կացության ակտը կազմվել էր՝

- մահացած անձի վերաբերյալ,

- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա,

- «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած՝ իրավաբանական փաստի մասին նոտարական ակտի հիման վրա:

Քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելու դիմում կարող է ներկայացնել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչված տասնվեց տարին լրացած անձը:

Դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

(1) դիմողի անձը հաստատող փաստաթուղթը.

(2) դիմումով ներկայացվող պահանջը հիմնավորող փաստաթղթերը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այն տեղեկությունները, որոնց միջոցով հնարավոր է պարզել պահանջի հիմքերի առկայությունը (բժշկական հաստատություններից տրված տեղեկանքներ, զինվորական գրքույկ, աշխատանքային գրքույկ, կրթությանը վերաբերող փաստաթղթեր, ամուսնության, ամուսնալուծության, երեխաների, եղբայրների, քույրերի ծննդյան վկայականների պատճեններ, ինչպես նաև տեղեկանք՝ տրված աշխատանքի վայրից, կամ այլ փաստաթղթեր):

Քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելու մասին դիմումի մեջ նշվում են հետևյալ տեղեկությունները.

(1) անունը, ազգանունը, հայրանունը.

(2) ծննդյան ժամանակը և վայրը, ազգությունը, սեռը.

(3) ընտանեկան դրությունը.

(4) քաղաքացիությունը.

(5) տեղեկություններ ծնողների (ամուսինների) մասին (յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան վայրը և ժամանակը).

(6) տեղեկություններ եղբայրների և քույրերի (անչափահաս և չափահաս երեխաների) մասին (յուրաքանչյուրի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան վայրը և ժամանակը).

(7) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

1.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցումները վերականգնելու համար, ներառյալ՝ վկայականներ տալու համար, գանձվում է պետական

տուրք բազային տուրքի հնգապատիկի չափով (այն է՝ 5000 ՀՀ դրամ):

Բազային տուրքի չափ է սահմանվում **1000 ՀՀ դրամը:**

1.4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Օրենքը սահմանում է քաղաքացիական կացության ակտերի վերականգնման ժամկետները, մասնավորապես՝ օրենսդիրը սահմանում է քաղաքացիական կացության ակտերի վերականգնման **ընդհանուր և հատուկ (առավել սեղմ) ժամկետներ:**

Որպես ընդհանուր կանոն՝ քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելը կատարվում է համապատասխան փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, բացառությամբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի կամ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտի հիման վրա քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելու դեպքի, որը կատարվում է եռօրյա ժամկետում:

Քաղաքացիական կացության ակտը վերականգնելու վերոնշյալ ժամկետները կարող են կրճատվել Կառավարության որոշմամբ

սահմանված համապատասխան չափով վճարի գանձման դեպքում: Ի մասնավորի՝ Կառավարության՝ 2021 թվականի հուլիսի 22-ի N 1188-Ն որոշման հավելված 1-ի համաձայն՝

(1) Քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելն օրենքով սահմանված ժամկետից կրճատ ժամկետում իրականացնելու դեպքում գանձվում է վճար՝ հետևյալ չափերով.

- երկրորդ աշխատանքային օրը՝ 30.000 ՀՀ դրամ,

- հինգերորդ աշխատանքային օրը՝ 20.000 ՀՀ դրամ,

- յոթերորդ աշխատանքային օրը՝ 10.000 ՀՀ դրամ:

(2) Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի կամ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտի հիման վրա քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելն օրենքով սահմանված ժամկետից կրճատ ժամկետում իրականացնելու դեպքում գանձվում է վճար՝ հետևյալ չափով.

- նույն աշխատանքային օրը, բացառությամբ, եթե դիմումը ներկայացվել է աշխատանքային օրվա ավարտից 4 ժամ առաջ: Սույն դեպքում վերականգնումը կատարվում է դիմում ներկայացնելուն հաջորդող աշխատանքային

օրը, իսկ վճարման ենթակա գումարի չափը կազմում է 10.000 ՀՀ դրամ:

1.5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելը հիմք է անձի նախկինում գրանցված քաղաքացիական կացության ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Քաղաքացիական կացության ակտը վերականգնելու մասին պահանջը հիմնավորված լինելու մասին եզրակացությունը հաստատելուց հետո գործակալությունը էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով կատարում է քաղաքացիական կացության ակտի գրանցում՝ **«Վերականգնված է»** նշումով: Վերականգնված քաղաքացիական կացության ակտի մասին վկայականը օրենքով սահմանված կարգով տրամադրվում է դիմողին:

Քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելը մերժվում է, եթե՝

(1) դիմումը ներկայացրել է ոչ իրավասու անձը, *օրինակ՝ դիմումը ներկայացվել է ԷՂ բռնի տեղահանված անձի ընկերոջ կողմից, որը չունի նման դիմում ներկայացնելու լիազորություն,*

(2) քաղաքացիական կացության ակտերի արխիվում հայտնաբերվել է անձի վերաբերյալ կազմված քաղաքացիական կացության ակտային գրանցումը. *տվյալ դեպքում ստացվում է, որ ակտային գրանցման վերականգնման անհրաժեշտություն չկա, ուստի՝ անձը կարող է օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացնել՝ համապատասխան փաստաթղթի կրկնօրինակ ստանալու խնդրանքով:*

(3) դիմումով ներկայացված պահանջը չի հիմնավորվում ներկայացված փաստաթղթերով: *Սույն դեպքում դիմողը չի ներկայացրել իր պահանջը հիմնավորող բավարար փաստաթղթեր:*

Քաղաքացիական կացության ակտը վերականգնելու մասին պահանջը հիմնավորված չլինելու եզրակացությունը հաստատելուց հետո քաղաքացիական կացության ակտը վերականգնելու մերժման մասին կազմվում է որոշում, որը պետք է պարունակի մերժման բոլոր հիմքերը, ներկայացված փաստաթղթերում առկա և գրանցմանը խոչընդոտող բոլոր թերությունները, ինչպես նաև հղում կատարվի կոնկրետ իրավական նորմին: Որոշումն օրենքով սահմանված կարգով տրամադրվում է դիմողին:

Քաղաքացիական կացության ակտը վերա-կանգնելու մերժումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

ՀՀ Արդարադատության նախարարի՝ 2021թ. հոկտեմբերի 8-ի N 494-Ն հրամանի N 9 հավելվածով սահմանված է քաղաքացիական կացության պետական գրանցման ակտը վերականգնելու մասին դիմումի ձևաթուղթ

Ներբեռնել ստորև.